Մարկի մասին

Արդյունաբերական համալիրների նախագծման ինստիտուտի բախտը բերեց. հենց սկզբից նրա տնօրենը եղավ անվանի ճարտարապետ, արվեստի վաստակավոր գործիչ Մարկ Գրիգորյանը: Կարևորն այն էր, որ նա որպես անձնավորություն, մարդկային էր իր էությամբ. Մարկ Գրիգորյանը նրբանկատ էր, բարի էր:

Իմ հնարավորություններից վեր է նրան բոլոր կողմերից ներկայացնել, որովհետև նրան չեմ աշակերտել, նույն տեղում չենք աշխատել, նրան չեմ աշխատակցել, բայց մի քանի դեպքերի, հանդիպումների մասին պետք է ասեմ:

Սկզբունքով դեմ էի նրա ստեղծագործական ուղղվածությանը. ես կարծում էի, որ ինչ էլ անենք, պետք է հայեցի լինի: Նա հետևում էր դասականին, ստեղծագործում, կառուցում էր եվրոպական վերածննդի ոգով, հետագայում հանգեց հայկականին, այդ ոգով կառուցեց Մատենադարանը, Հանրապետության հրապարակի որոշ շինություններ, Գագրայի հանգստի տունը և այլն:

Մարկ Գրիգորյանը ինձ այդպես էլ գիտեր, բայց, ըստ երևույթին, առանց տեսանելի դարձնելու հետևում էր իմ գործունեությանը և համակրում էր, որպես երիտասարդ ճարտարապետի: Երբ կառուցման համար հաստատում էր «Կոոպերատիվ տեխնիկումի» իմ նախագիծը Կորյունի փողոցի վրա (այժմ ճարտարագիտական համալսարանի N 12 մասնաշենքը), բարի մաղթեց, շնորհավորեց: Ներկա գտնվող ճարտարապետ Սամվել Սաֆարյանը առաջարկեց շենքը երկարացնել, ծածկել իր նախագծով կառուցված լեռնամետալուրգիական տեխնիկումի ճակատը փողոցի կողմից: Մարկ Գրիգորյանը, թե մենք պարտավոր չենք քո փչացրած գործերը ծածկել՝ ինչպես նախագծվել է, այդպես էլ թող կառուցվի: Ես անհարմար զգացի, որ իմ ներկայությամբ նա այդպես չոր խոսեց, բայց նրանք դասընկերներ էին, իրարից չնեղացան: Ճիշտն ասած, Սաֆարյանի առաջարկն ինձ դուր էր գալիս, շինության II, III հարկերում մշակված մոտիվը եթե մի քիչ էլ երկարեր, ճարտարապետությունը կշահեր:

Երբ շենքն արդեն կառուցված էր, Աբովյան և Կիրովի (այժմ՝ Կորյունի) փողոցների խաչմերուկում Մարկ Վլադիմիրովիչը ինձ բռնացրեց և ասեց «նայիր, թե Ձեր շենքը ինչպես լավ է նստել իր տեղում, մասշտաբով էլ կապված է շրջապատի հետ»:

Նկ. 1 *– Կոոպերատիվ տեխնիկումի շենքը Կորյունի փողոցի վրա, 1938-1943 թթ. (այժմ՝ պոլիտեխնիկական համալսարանի մասնաշենք N 12, ճարտարապետ՝ Տ. Մարության):*

1944 թ. «Ձակ ֆրոնտից» ինձ գործուղեցին Երևան N 722 զինվորական գործարանում (որ կոչում էին «Մինամյոտնի») կապիտալ շինարարության բաժնի գլխ. ինժեների պաշտոնում աշխատելու: Աբովյան փողոցի փակ մայթով բարձրանում էի, փողո-ցի աջ մայթով իջնող Մարկ Գրիգորյանը ավելի շուտ ինձ նկատելով, փողոցը թեք անցավ, մոտեցավ ինձ, ձեռքը մեկնեց, ուրախությամբ ողջունեց առողջ վերադառնալու համար և վերադարձավ իր մայթը, այնտեղ սպասող ճարտարապետ ընկերոջ հետ

ճանապարհը շարունակելու: Ավագ ընկերոջ և կոլեգայի այդ քայլը իմ կողմից ընդունվեց խորապես հարգանքով ու հուզմունքով. նա անկեղծորեն ուրախ էր, որ ես կայի, այն շենքի ճարտարապետս, որի նախագծով պատերազմի օրերին կառուցվում էր: Շենքի կառուցող Արմիկ Խաչիկյանը հետագայում պատմում էր, որ նա ամեն օր գալիս, բարձրանում էր փայտամածների վրա և ռուսերենով հարցնում էր, «լսիր, Խաչիկյան, այս շենքի ճարտարապետն ո՞վ է», ամեն օր նույն ձևով նույն խոսքերով:

Ամեն տարի օգոստոս ամսում նշվում էր «Շինարարների օրը»: Մի տարի բավարարվեցին թերթում տպագրված հոդվածով և հոդվածի հեղինակն էր Մարկ Գրիգորյանը: Նա էլ ողջ հոդվածը նվիրել էր իր ղեկավարած ինստիտուտի գործերին և աշխատողներին, ճիշտ է, այդ նախագծում [նախագծային ինստիտուտում] աշխատում էին շատ անվանի ճարտարապետներ և այլ մասնագիտության ինժեներներ, բայց հոդվածը պիտի ընդգրկեր ողջ հանրապետությունը. նա կարծեք ցուցադրաբար գրեթե թվարկել էր իր լավ աշխատողներին անուն առ անուն ու վերջում, զարմանալիորեն՝ Տիրան Մարության, որ ոչ մի կապ չուներ իր ինստիտուտի հետ:

Այդ բոլորին նկատելի փաստը շատերն էին ակնարկում, ու մի հարմար առիթով Սոս Մանուկյանը դիմել էր, թե «Մարկ Վլադիմիրովիչ, Յանսոնը (Հովհաննես Հակոբյան) ինձ հարցապնդում է անում, թե Մարկ Վլադիմիրովիչը իր ինստիտուտում աշխատողներից բացի, ոչ ոքի անունը չէր գրել, էլ ինչու՞ է վերջում գրել Տիրան Մարությանի անունը, թող այդ էլ չգրեր»: Մարկ Վլադիմիրովիչը պատասխանում է. «Դուք չգիտեք, Մարությանը մեր ժողովրդի համար շատ բան է արել»: Ինձ որ մնար, ես ևս Յանսոնի հարցը կուղղեի: Հետո մտածում էի, թե հոդվածագիրը ի՞նչ առիթով էր իմ անունը գրել. արդյոք նրա համար, որ ես ևս զբաղված էի արդյունաբերական շինություններ նախագծելով, հիդրոէլեկտրակայաններ, թե՞ նկատի ուներ «Ավանի տաճարը» գրքի համար, որ նոր լույս էր տեսել (1976 թ.) և ես մակագրությամբ մի օրինակ նվիրել էի իրեն և նա թերևս կարդացել էր:

Վերջին անգամը Մարկ Վլադիմիրովիչին հանդիպեցի Կորյունի (նախկին Կիրովի) և Գևորգ Քոչարի փողոցների խաչմերուկում: Դիմեցի նրան, թե «Մարկ

Վլադիմիրովիչ, հիշու՞մ եք Մարտիրոս Սարյանի առաջարկը, որ անհրաժեշտ է կոնսերվատորիայի նախկին շինությունը իր տեղից հեռացնել (քանդել), որպեսզի Մատենադարանը ավելի լայն տեսանկյունով երևա, մինչ հակառակն արվեց, կառուցվեց այս բազմահարկ շենքը և Մատենադարանի մուտքի հրապարակից լրիվ ծածկվեց Արարատյան համայնապատկերը: Դուք կարող էիք անհրաժեշտ չափով սահմանափակել շինության հարկայնությունը»: Նա նայեց, նայեց ինձ վրա և ոչինչ չասեց, աչքերի տխուր արտահայտությամբ հասկացնելով, որ «ուժս չպատեց»: Այո, «ուժը չպատեց»: Շատ դեպքերում է, որ շատերիս ուժը չի պատում մեր ուզածն անելու համար:

Ժամանակներ էին, եղան, անցան:

Տիրան Մարության

ՀՀ վաստակավոր շինարար,

Ճարտարապետության դոկտոր

*գրվել է 16.04.2000 թ.